ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 63 ,,16, հուլիսի 2014թ

,,ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014Թ ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ ԹԻՎ 122-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ '' ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ'' ԾՐԱԳՐԻՈՎ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ''ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ'' ՀՈԴՎԱԾՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ '' ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ'' ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏԱՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ ՀՀ Վայոց ձորի մարզային ենթակայության ,,Եղեգնաձորի թիվ 1 հանրակրթական ուսումնական հաստատություն,, Պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2013թ. դեկտեմբերի 17-ին N 10 հայտով և N 10 հավաստագրով Եղեգնաձորի տեղական գանձապետական բաժանմունքին ,,Սոցիալական փաթեթով ապահովում,, ծրագրով և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Այլ նպաստներ բյուջեից,, հոդվածով դպրոցի 52 շահառուների համար հատկացված գումարի շրջանակներում 417890 հհ դրամ գումարով պահանջ է ներկայացրել, իսկ Եղեգնաձորի տեղական գանձապետական բաժանմունքի կողմից նշված գումարի հատկացումը դպրոցին չի կատարվել և նշված գումարը հետ է վերադարձվել ՀՀ 2013թ պետական բյուջե: Ելնելով վերոգրյալից

Որոշում եմ՝

1. ՀՀ կառավարության 2014թ. փետրավրի 6-ի N 122-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ,,Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում,, ծրագրով, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Այլ նպաստներ բյուջեից,, հոդվածով հատկացված գումարի չբաշխված մասի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզային ենթակայության ,,Եղեգնաձորի թիվ 1 հանրակրթական ուսումնական հաստատություն,, ՊՈԱԿ-ին հատկացնել 417890հհ դրամ գումար:
2. Հանձնարարել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոց.տնտեսական զարգացման վարչությանը ապահովել առաջին կետով նշված գումարի ստացման և հանրակրթական դպրոցին հատկացման աշխատանքները:

Է. ՂԱԶԱՐՅԱՆ